

# Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

27-34.1-Մ3-41 Ավագ մասնագետ(2023-11-20 )

## 1. Ընդհանուր դրույթներ

### 1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Ներքին գործերի նախարարություն | Մարդկային ռեսուրսների կառավարման վարչություն | Քաղաքացիական ծառայության համալրման բաժին | Ավագ մասնագետ, (27-34.1-Մ3-41)

### 1.2 Ենթակա և հաշվետու է

Ավագ մասնագետը անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

### 1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի ավագ մասնագետներից մեկը:

### 1.4 Աշխատավայր

Հայաստանի Հանրապետություն, Երևան, Կենտրոն վարչական շրջան, Նալբանդյան 130:

## 2. Պաշտոնի բնութագիր

### 2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. Իրականացնում է Նախարարությունում, նրան ենթակա պետական մարմիններում քաղաքացիական ծառայողների ընդունման, տեղափոխման, փոխադրման, գործուղման վերաբերյալ իրավական ակտերի նախագծերի նախապատրաստումը, կնքած ժամկետային աշխատանքային պայմանագրերի գործողության ժամկետների նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև ծանուցումների գործընթացները.
2. Մասնակցում է Նախարարության, նրան ենթակա պետական մարմինների քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների թեստային և հարցազրույցի փուլերի նախապատրաստմանը, ինչպես նաև մրցույթների կազմակերպմանը առնչվող այլ աշխատանքների իրականացմանը.
3. Մասնակցում է առաջին անգամ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձի փորձաշրջանի կազմակերպման աշխատանքներին.
4. Մասնակցում է փորձնակների ընտրության և փորձագետների ներգրավման գործընթացներին.
5. Իրականացնում է քաղաքացիական ծառայողների տեղափոխության, փոխադրման և գործուղման ընթացակարգին համապատասխան աշխատանքները.
6. Իրականացնում է իր իրավասության շրջանակներում համապատասխան տեղեկատվական հարթակում անհրաժեշտ տվյալների մուտքագրումը և փոփոխումը:

### Իրավունքները.

- Թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթներին մասնակցելու համար քաղաքացիներից ստանալ անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթ.
- Թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթներին մասնակցելու համար քաղաքացիներից և աշխատողներից վերցնել դիմումներ, ստուգել ներկայացված փաստաթղթերի ամբողջությունը և օրենսդրության պահանջներին համապատասխան տեղեկատվական հարթակում անհրաժեշտ տվյալների մուտքագրումը և փոփոխումը:
- Փորձագետ ներգրավելու, ինչպես նաև փորձնակ զրանցելու համար համապատասպան ստորաբաժանումից ստանալ իիմնավորում ներգրավման պահանջի վերաբերյալ, փորձագետի աշխատանքային ծրագիրը, դիմումատուններից ստանալ պահանջվող փաստաթղթեր, մասնակցել փորձագետի և փորձնակի ընտրության գործընթացին:

# Պարտականությունները

- հավաքագրել տեղեկատվություն թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթի մասնակցելու համար դիմած քաղաքացիներից ստացված փաստաթղթերի հիման վրա եզրակացնելության ներկայացման համար.
- համապատասխան կառուցվածքային ստորաբաժանում ներկայացնել առաջարկություններ՝ Նախարարության, նրան ենթակա պետական մարմինների քաղաքացիական ծառայության անվանացման կազմման, պաշտոնների գնահատման, դասակարգման, պաշտոնների անձնագրերի, դրանցում փոփոխություններ կատարելու վերաբերյալ.
- ուսումնասիրել Նախարարության աշխատողների (այդ թվում՝ Նախարարության ենթակայությամբ գործող կազմակերպությունների ղեկավարների) ժամկետային աշխատանքային պայմանագրերի գործողության ժամկետները.
- ուսումնասիրել և ստուգել ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու դեպքում կազմված հայտարարությունները, ինչպես նաև ժամկետային աշխատանքային պայմանագրերի նախագծերը.
- ստուգել քաղաքացիական ծառայության օրենսդրությանը համապատասխան քաղաքացիական ծառայուղների փորձաշրջանի անցկացման ժամկետները:

## 3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

### 3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն:

### 3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

### 3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ կադրերի և մասնագիտական կողմնորոշման բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

### 3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ  
◦ Խնդրի լուծում  
◦ Հաշվետվությունների մշակում  
◦ Բարեկարգություն  
◦ Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ  
◦ Փոփոխությունների կառավարում  
◦ Ժամանակի կառավարում  
◦ Փաստաթղթերի նախապատրաստում

## 4 Կազմակերպական շրջանակ

### 4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:

### 4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված՝ մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի

ստեղծման շրջանակներում:

#### **4.3 Գործունեության ազդեցությունը**

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

#### **4.4 Ծփումները և ներկայացուցչությունը**

Իր իրավասության շրջանակներում շփում և որպես ներկայացուցիչ հանդես է զայխ համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է զայխ համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

#### **4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: